ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հունիսի 2017թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

Կ. ԱՐԵՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու անդամ Կամո Արեյանին նշանակել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«Կ. ԱՐԵՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«3. Քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

4. Քաղաքապետի առաջին տեղակալը պետք է լինի Երևանի ավագանու անդամ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակել Կամո Արեյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Կ. ԱՐԵՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Կ. Արեյանին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Կ. ԱՐԵՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Կ. Արեյանին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Կամո Արեյան

Ծնվել է 1957թ. նոյեմբերի 20-ին ՀՀ Արագածոտնի մարզի Ներքին Սասնաշեն գյուղում:
1979թ. ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:
1979-80թթ. աշխատել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես տնտեսագետ:
1980-82թթ. ծառայել է խորհրդային բանակում:
1982-95թթ. աշխատել է ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես գիտական աշխատող:
1995-99թթ. եղել է ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր: Մինչև 1997թ. մշտական հիմունքներով աշխատել է ՀՀ Աժ պաշտպանության, ազգային անվտանգության և ՆԳ հարցերի մշտական հանձնաժողովում:
1997-2001թթ. եղել է Երևանի քաղաքապետի տեղակալ, 02.1998-05.1998թթ.՝ Երևանի քաղաքապետի պաշտոնակատար:
2001-2002թթ. եղել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ:
2002-2003թթ. եղել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարի տեղակալ:
2003 - 2009թթ. եղել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:
2009թ. հուլիսի 6-ին Երևան քաղաքի ավագանու որոշմամբ նշանակվել է Երևանի քաղաքապետի տեղակալ:
2013թ. մայիսի 5-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներով Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:
2013թ. հունիսի 15-ին Երևանի ավագանու նիստում նշանակվել է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:
2017թ. մայիսի 14-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներով Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ:
1989-1992թթ. «Սասունցիներ» կամավորական ջոկատի կազմում մասնակցել է Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը:
1990 թվականից «Սասուն-Տարոն» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության նախագահն է:
2014 թվականից Երկրապահ կամավորականների միության վարչության անդամ է:
Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, Անանիա Շիրակացու մեդալով, Հայասանի Հանրապետության Ազգային Ժողովի պատվո մեդալով, Հայաստանի Հանրապետության վարչապետի հուշամեդալով, «Երևանի զինանշան» և «Ֆրիտյոֆ Նանսեն» հուշամեդալներով, «Սպարապետ Վազգեն Սարգսյան» շքանշանով, «ԵԿՄ 20 տարի» հոբելյանական մեդալով, «Համագործակցություն հանուն փրկության» մեդալով:
Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է:
Ամուսնացած է, ունի երկու երեխա: